

Ուրվագիր ութերորդ
Աստծու տնտեսությունը՝
Նրա բաշխմամբ հանդերձ, Երեմիայի գրքում

Գրվածքների լմբերցում. Երմ 2:13, 15:16, 17:7-8, 19-27, 23:5-6, 31:31-34, Երք 8:8-12

- I. Երեմիա 17:7-8-ում ասվում է. «Օրինյալ է այն մարդք, ով Եհովային է ապավինում և ում ապավեճը Եհովան է: Նա նման կինի ջրի մոտ տնկված ծառի, որն իր արմատները զցում է հոսանքի մոտ և չի վախենա, երբ տապը գա. որովհետև նրա տերեւները փարթամ են մնում և նա չի անհանգտանա երաշտի տարում և չի դադարի պտուղ տալուց».**
- Ա. Այս խոսքերը կարելի է հասկանալ երկու տարբեր կերպերով՝ ըստ բնական ըմբռնման կամ ըստ Աստծու տնտեսության. այս խոսքերը նյութական օրինություն ստանալու համար Աստծուն ապավինելու մակերեսային հարցին չեն վերաբերում. իրականում այս խոսքերը վերաբերում են Աստծու տնտեսությանը, որն իրագործվում է Նրա բաշխման միջոցով.**
- 1. Հայտնությունն այստեղ բացահայտում է, որ Աստծու տնտեսության համաձայն՝ Նա, ով ապավինում է Աստծուն, նման է ջրի մոտ տնկված ծառի, ինչը խորհրդապատկերում է Աստծուն՝ որպես կենդանի ջրերի ակունքի (2:13ա). մի կողմից մենք ապավինում ենք Աստծուն, մյուս կողմից՝ Աստված Ինքն է Նրա հանդեպ մեր ապավենք:**
 - 2. Ծառն աճում է ջրի մոտ՝ իր մեջ կլանելով ջրի ողջ հարստությունը. սա Աստծու բաշխման նկարն է. որպեսզի ստանանք աստվածային բաշխումը, մենք՝ որպես ծառեր, պետք է կլանենք Աստծուն՝ որպես կենդանի ջրի, որը բաշվում է մեր էության մեջ՝ դառնալով մեր բուն բաղադրիչը:**
 - Բ. Միտքն այստեղ նույնն է, ինչ Ա Կրք 3:6-ում, որտեղ Պողոսն ասում է. «Ես տնկեցի, Ապողոսը ջրեց, բայց Աստված էր աճեցնում». ջրելը ծառի՝ ջուր կլանելու համար է, իսկ կլանելն Աստծու բաշխումը ստանալու համար է.**
 - 1. Ծառն աճում է Աստծու՝ որպես Մատակարարողի ու մատակարարման շնորհիվ. մատակարարումը մատակարարող Աստծու հարստությունն է, որը բաշխվում է մեր մեջ՝ որպես բույսերի, որպեսզի մենք աճենք Աստծու չափով. ի վերջո բույսերը և Աստված, Աստված և բույսերը մեկ են դառնում՝ ունենալով միևնույն տարրը, էությունը, կազմությունն ու տեսքը՝ Կոյ 2:19:**
 - 2. Մենք բոլորս պետք է տեսնենք Աստծուն՝ որպես կենդանի ջրի կլանելու հանգուցային նշանակությունը, որպեսզի մենք կազմվենք Նրա տարրով ու էությամբ և աճենք Աստծու աճով. այնտեղ, որտեղ պակասում է կյանքում աճը, հավատացյալների քրիստոնեական կյանքը խառանաշփոր է դառնում, եկեղեցական կյանքը վնասվում է և Մարմնի կյանքը՝ ավերվում:**
 - 3. Քրիստոսի Մարմնի կառուցման նպատակով կյանքում աճելու համար մենք պետք է կլանենք Աստծուն՝ դեպի ներքև արմատներ զցելով և դեպի վերև պտուղ բերելով (Եսյ 37:31). սա նշանակում է, որ մենք պետք է Աստծու հետ հաղորդակցության ծածուկ ժամանակ ունենանք (Մտք**

6:6, 14:22 23). քրիստոնյայի զորանալը, լուսավորվելը, հանգիստը վայելելը, ուրախանալը, հավատալը, խնդիրներ լուծելը, փորձումները, գայթակղություններն ու դժվարությունները հաղթահարելը և մխիթարվելը կախված են աղոթքի և Աստծու խոսքի միջոցով Աստծու հետ ծածուկ հաղորդակցությունից (Դն 6:10, Կոս 4:2, Բ Տմբ 3:14 17):

II. Երմ 17:19-27-ում բռվանդակված է խոսք Աստծու շաբաթը պահելու մասին. Աստծու շաբաթը պահել նշանակում է վայելել Նրան, հանգստանալ Նրա մեջ և բավարարվել Նրանով՝ որպես կենդանի ջրերի ակունքով՝ 2:13.

Ա. Ելց 31:12-17-ում Աստծու բնակատեղը կառուցելու մասին երկարաշունչ գրառումից հետո կրկնվում է շաբաթը պահելու մասին պատվիրանը. Կոս 2:16-17 և Ստբ 11:28-30-ի համաձայն՝ Քրիստոսը շաբաթ հանգստի իրականությունն է՝ Երմ 4:7-9, Եսյ 30:15ա.

1. Երեւ մենք գիտենք միայն Տիրոջ համար աշխատել, բայց չգիտենք Նրա հետ հանգստանալ, մենք գործում ենք աստվածային սկզբունքին հակառակ.

ա. Աստված յոթերորդ օրը հանգստացավ, որովհետև Իր աշխատանքն ավարտել էր ու բավարարված էր. Աստծու փառքը դրսեռվել էր, որովհետև մարդը Նրա պատկերն ուներ և պատրաստ էր գործադրելու Նրա իշխանությունը՝ Նրա թշնամուն՝ Սատանային, ենթարկելու համար. Երեւ մարդն արտահայտում է Աստծուն և վերջ դնում Աստծու թշնամուն, Աստված բավարարված է և կարող է հանգստանալ Ծնդ 1:26, 31, 2:1-2:

բ. Հետազայում յոթերորդ օրը հավերժացավ որպես շաբաթ (Ելց 20:8-11). Աստծու յոթերորդ օրը մարդու առաջին օրն էր. ստեղծվելուց հետո մարդը ոչ թե Աստծու գործին միացավ, այլ Աստծու հանգիստը մտավ:

2. Մարդը ստեղծվել էր ոչ թե նախ աշխատելու, այլ Աստծով բավարարվելու և Աստծու հետ հանգստանալու համար. Աստծու պարագայում նախ՝ աշխատանքն է, հետո՝ հանգիստը, բայց մարդու պարագայում նախ՝ հանգիստն է, հետո՝ աշխատանքը. աստվածային սկզբունքն այն է, որ Աստծուն լիարժեք կերպով վայելելուց հետո մենք կարող են աշխատել Նրա հետ միասին՝ հմտն Ստբ 11:28 30.

ա. Երեւ մենք չգիտենք, թե ինչպես վայելել Իրեն՝ Աստծուն, և ինչպես լցվել Աստծով, չենք իմանա, թե ինչպես աշխատել Նրա հետ և մեկ լինել Նրա հետ Նրա աստվածային աշխատանքում. մարդը վայելում է այն, ինչ Աստված իրազործել է Իր աշխատանքում:

բ. Պենտեկոստեի օրն աշակերտները համակվեցին Հոգով, ինչը նշանակում է, որ նրանք համակվեցին Քրիստոսի՝ որպես երկնային գինու վայելքով. միայն վայելքով լցվելուց հետո նրանք սկսեցին աշխատել Աստծու հետ՝ Նրա հետ միասնության մեջ՝ Գրծ 2:4ա, 12-14:

բ. Որպես Աստծու մարդիկ՝ մենք պետք է նշան կրենք, որ նախ հանգստանում ենք Աստծու հետ, վայելում ենք Աստծուն, լցում ենք Աստծով, և ապա աշխատում ենք հենց այն Սեկի հետ, ով լցնում է մեզ. ավելին՝ մենք աշխատում ենք ոչ միայն Աստծու հետ, այլև Աստծու հետ մեկ լինելով,

ունենալով Նրան որպես մեր աշխատելու ուժն ու տքնելու մեր եռանդը՝ Ելց
31:13, 17:

- Գ. Եկեղեցական կյանքում մենք, հնարավոր է, շատ բաներ ենք անում՝ առանց
նախ Տիրոջը վայելելու և առանց Տիրոջը ծառայելու՝ Նրա հետ մեկ լինելով.
այդպիսի ծառայության արդյունքը լինում է հոգեսր մահը և Մարմնի մեջ
հաղորդակցության կորուստը՝ խս. 14-15:
- Դ. Տիրոջ՝ եկեղեցին կառուցելու աշխատանքը պետք է սկսվի Աստծու
վայելքով, ինչը ցույց կտա, որ մենք մեր ուժով չենք Աստծու համար
աշխատում, այլ Նրան վայելելով և Նրա հետ մեկ լինելով. սա Քրիստոսի՝
որպես մեր հոգում մեր ներքին հանգստի հետ կապված շարաբի սկզբունքը
պահելն է՝ Ա Կրք 3:9, 15:58, 16:10, Բ Կրք 6:1ա:

III. Երեմիա մարգարեի գիրքը ամբողջ Աստվածաշնչի համառոտ շարադրանքն է.
Երեմիայի մարգարեությունը ցույց է տալիս, որ միայն Քրիստոսը կարող է
կատարել Աստծու տնտեսությունը և միայն Քրիստոսն է Աստծու՝ Իր
տնտեսության մեջ ունեցած պահանջների պատասխանը. Երեմիայի պատկե-
րած նկարը ցույց է տալիս, որ մենք ոչինչ ենք, իսկ Քրիստոսն ամեն ինչ է մեզ
համար.

Ա. Երեմիան խոսում է այն մասին, որ Աստծու տնտեսության կատարման մեջ
Քրիստոսը մեր արդարությունն ու մեր փրկագնումն է (23:5-6), որ Աստված
կենդանի ջրերի ակունքն է (2:13), որ Քրիստոսը մեր կերակուրն է (15:16),
և որ Քրիստոսը նոր ուխտի իրականությունն է՝ դրա բոլոր օրինություն-
ներով հանդերձ (31:31-34, Եբր 8:8-12).

1. Մի կողմից՝ կարելի է ասել, որ «նոր ուխտ»-ը «Աստծու տնտեսության»
հոմանիշն է, քանի որ նոր ուխտը Աստծու տնտեսության բովան-
դակությունն ու էությունն է՝ Երմ 31:31-34, Հք 10:13, հմմտ Եփս 3:9.

ա. Նոր ուխտի բոլոր իմնական դրույթները Աստծու տնտեսության և
Նրա բաշխման բովանդակությունն են, որը ներառում է Նրա
իրավական փրկագնումն ու Նրա օրգանական փրկությունը, որոնց
նպատակը մեզ աստվածացնելն է Քրիստոսի Մարմնի կառուցման
համար, որն ավարտունանում է Նոր Երուսաղեմում:

բ. Առաքյալների սպասավորությունը Աստծու նոր ուխտի տնտեսու-
թյան համար եղող սպասավորությունն է. հենց Աստծու տնտեսու-
թյան վրա է կենտրոնացած նոր ուխտի սպասավորությունը՝ Ա Տմբ
1:3-4, հմմտ Բ Կրք 3:3, 6:

2. Մյուս կողմից՝ կարելի է ասել, որ նոր ուխտն այն ճանապարհն է, որով
Աստված կատարում, իրագործում է Իր տնտեսությունը. Կորնթացի-
ներին ուղղված երկրորդ քուղքը բացահայտում է, որ նոր ուխտի սպա-
սավորությունը Աստծու հավիտենական տնտեսության իրագործման
համար է՝ 2:12-4:1:

Բ. Քրիստոսը նոր կտակի՝ նոր ուխտի իրականությունն է, այն ամենի իրա-
կանությունը, ինչ Աստված է, և այն ամենի, ինչ Աստված տվել է մեզ, ուստի
Քրիստոսը նոր ուխտն է.

1. Կտակի կետերը բազմաթիվ են, բայց այս բազմաթիվ կետերն
իրականում մեկ անձ են՝ պնևմատիկ Քրիստոսը՝ Եսյ 42:6, 49:8, Երմ
31:31-34, Եբր 8:8-12, Հքի 20:22, Եփս 3:8:

2. Նոր կտակում Տիրոջ կողմից մեզ կտակածը անսպառելի է, և դա այն բանի համար է, որ մենք հավիտենապես դրանք փորձառարար ապրենք ու վայելենք Հոգով միջոցով՝ Եր 9:15:
3. Մենք պետք է քայլենք մեր նախահայրերի հինավորց շավիղներով՝ լնթանալով նոր ուստի ճանապարհով, որը կենտրոնացած է Աստծու տնտեսության վրա, այն ճանապարհով, որն ուղղորդում է դեպի կյանք. արահետները Սատանայի դավերի շավիղներն են՝ լստ նրա խոտորող հնարքների, որոնք տանում են դեպի ոչնչացում. արահետներով լնթանալը վարընթաց գնալն է, բայց հինավորց շավիղներով՝ հարթված ճանապարհով լնթանալը, վերընթաց գնալն է՝ Երմ 18:15, հմմտ Մտք 7:13-14:
4. Նոր ուստում՝ հավիտենական ուխտում, Աստված մեզ մեկ սիրու և մեկ ճանապարհ է տալիս (Երմ 32:39-41). մեկ սիրտը Աստծուն սիրելու, Աստծուն փնտրելու, Աստծուն ապրելու և Աստծով կազմվելու սիրտն է, որպեսզի Նրա արտահայտությունը լինենք. մեկ ճանապարհը Եռամեկ Աստված Ինքն է՝ որպես կյանքի ներքին օրենքը՝ դրա աստվածային լնդունակությամբ (31:33 34). այս մեկ սիրտը և մեկ ճանապարհը միաբանությունն են (Գրծ 1:14, 2:46, 4:24, Հոմ 15:6):
- գ. Որպես Համբարձվածը, ով նստած է գահին երկինքներում, Քրիստոսն այժմ գործադրում է նոր ուխտը, որը նա մեզ է տվել որպես կտակ՝ բարեխոսելով մեզ համար և սպասավորելով մեզ, որպեսզի մենք գիտակցենք, փորձառարար ապրենք և վայելենք նոր կտակում պարունակվող բոլոր կետերը՝ Երբ 12:2, 7:25, 8:1-2.
1. Նոր կտակը՝ նոր ուխտը, Կտակողի կամքը, վավերացվել է Քրիստոսի մահով ու Քրիստոսի կողմից գործադրվում և ուժի մեջ է դրվում Նրա հարության և համբարձման մեջ:
2. Նոր ուխտը կտակվել է մեզ որպես նոր կտակ, և այժմ Իր սպասավորության առեղծվածային ոլորտում Քրիստոսը գործադրում է այն, ինչ թողել է որպես ժառանգություն:
3. Քրիստոսն այժմ երկինքներում է՝ կենդանի, աստվածային և լնդունակ. Նա ի վիճակի է գործադրելու նոր կտակը, նոր ուխտը՝ բոլոր մանրամասնություններով հանդերձ՝ ժառանգության բոլոր կետերը մեզ համար հասանելի և իրական դարձնելով.
 - ա. Որպես աստվածային Քահանայապետը՝ Քրիստոսը գործադրում է նոր ուխտը՝ բարեխոսելով մեզ համար, աղոթելով, որ մենք բերվենք նոր ուխտի իրականության մեջ՝ 7:25:
 - բ. Որպես նոր ուխտի Սիշնորողը, Գործադրողը՝ Քրիստոսն Իր երկնային սպասավորության մեջ գործա- դրում է նոր կտակն ու մեր մեջ իրազորդում է դրա կետերից յուրաքանչյուրը՝ 8:6, 9:15, 12:24:
 - գ. Որպես նոր ուխտի երաշխավորությունը՝ Քրիստոսն այն բանի գրավականն է, որ նոր ուխտի բոլոր կետերն իրականացվելու են. Նա երաշխավորում ու հավաստիացնում է կտակի արդյունավետությունը՝ 7:22:
 - դ. Որպես ճշմարիտ (երկնային) խորանի Սպասավորը՝ Քրիստոսը մեր մեջ է սպասավորում նոր կտակի կետերը, օրինությունները՝ մեր փորձառության մեջ գործուն դարձնելով նոր ուխտի փաստերը՝ 8:2:

- ե. Որպես ոչխարների մեծ Հովհանք՝ Քրիստոսն Իր հովելու միջոցով ավարտունացնում է Նոր Երուսաղեմը ըստ Աստծու հավիտենական ուխտի՝ 13:20:
- Դ. Եթե ուզում ենք ստանալ նոր ուխտի բոլոր օրինությունների կիրառումը, մենք պետք է լինենք մարդիկ, ովքեր արձագանքում են Քրիստոսի երկնային սպասավորությանը՝ 12:1-2, Կրո 3:1.
1. Քրիստոսի՝ երկնքում եղող սպասավորությունը, որը գործադրում է նոր ուխտը, պահանջում է մեր արձագանքը՝ Եքր 7:25, 4:16, 10:19, 22.
 - ա. Դարեւ շարունակ Քրիստոսը, առանց բավարար հաջողության հասնելու, փորձել է մի խումբ մարդիկ ձեռք բերել, որոնք կարձագանքներին երկինքներում եղող Նրա սպասավորությանը:
 - բ. Տիրոջ ողորմությամբ և շնորհրով երկրի վիա այսօր Տիրոջ վերականգնման մեջ եղող մի խումբ մարդիկ կան, որոնք արձագանքում են Քրիստոսի երկնային սպասավորությանը:
 - գ. Այն ժամանակ, երբ Գլուխը երկնքում բարեխոսում է մեզ համար ու սպասավորում է մեզ, մենք՝ Մարմինը, երկրի վրա արձագանքում ենք Քրիստոսի երկնային սպասավորությանը՝ համապատասխանելով և արձագանքելով այն բանին, ինչ Նա անում է, որպեսզի գործադրի նոր ուխտը, և անդրադարձնելով այն, ինչ Նա անում է՝ Եփս 1:22-23, 4:15-16, Գրծ 6:4:
 2. Սեր աչքերը պետք է բացվեն՝ տեսնելու ժառանգության բոլոր կետերով հանդերձ՝ նոր կտակի՝ նոր ուխտի, Կտակողի կամքի երկնային տեսությունը՝ Եփս 1:17-18, Գրծ 26:18-19.
 - ա. Հայոն ամեն ինչ խոստացել է, իսկ Տեր Հիսուսն ամեն ինչ իրազործել է. այժմ բոլոր իրազործված փաստերը դարձել են մեզ կտակածի կետերը՝ Ղկս 22:20, Եքր 9:16-17:
 - բ. Եթե ունենանք երկնային հայացքն ու տեսնենք, որ Աստծու բոլոր օրինությունները կտակում եղող ժառանգություն են, ապա մենք կաղործենք ոչ թե որպես խեղճ մուրացկաններ, այլ որպես փառավոր ժառանգներ, ովքեր հավատրով ստանում են այն ամենը, ինչ կտակած է նրանց՝ Հոմ 8:17, Եփս 3:6, Եքր 6:17, 1:14:
 - գ. Եթե ունենանք նոր կտակի՝ նոր ուխտի հանդեպ երկնային հայացքը, մեր պատկերացումը կփոխվի, մենք արմատական փոփոխություն կապրենք և Տիրոջը գովարանելիս մեզնից դուրս կգանք՝ Բ Կրթ 5:13, Հյու 5:6-13:
 - Ե. Երեմիայի 31:31-34-ը սահմանելու համար մեզ անհրաժեշտ են Նոր Կտակարանի բոլոր քանյոր գրքերը.
 1. Եթե այս հատվածը հասկանանք Նոր Կտակարանի լույսի ներքո, կտեսնենք, որ այս նոր ուխտում մենք ունենք եկեղեցին, Աստծու բագավորությունը, Աստծու լնտանիքը, Աստծու տունը՝ որպես Աստծու բնակատեղը մեր հոգում, նոր մարդուն, Քրիստոսի Մարմինը՝ որպես պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու լեցունությունը:
 2. Ի վերջո՝ այս նոր ուխտը բերելու է հազարամյան. որպես վերջնարդյունք և ավարտունություն այն բերելու է Նոր Երուսաղեմը նոր երկնքում և նոր երկրում հավիտենապես: